

զի թեպէտ լուա ՚ի դեսպանէն (Լեւոնի, ՚ի Ռոպերդայ) զփաստս նորա, իբրու զի Կասողիմ զառաջինն կալուած էր Մլէհի հօրեղբօր իւրոյ, եւ յետոյ ինքն կորգեաց յայլազգեաց, սակայն զի վաղագոյն եւս ասպետացն էր վիճակեալ տեղին, անօտարանալի համարէր. յայս սակս ըստ իւրում խոհականութեան՝ ամոք բանիւք (գոր եւ *մեղրածորան*¹³⁷ կոչէ Լեւոն), յորդորէր զթագաւորն, յանձնել առ նոսա առ ժամն գտեղին, եւ զինդիր իւր քննել յատենի իւրում կամ ՚ի նուիրակացն՝ գոր փութով առաքելոց էր յարեւելս, եւ անսալ վճռոյ նոցին¹³⁸: Յանձն էառ Լեւոն առնել այնպէս ՚ի գալ նուիրակացն եւ ՚ի քննել, եւ զՌոբէն եւս յանձնել ՚ի նոյն իսկ ասպետսն, զի մարգեացն յարիական հրահանգս. այլ առ ժամն աղաչէր շատանալ այլովք կալուածովք՝ գոր ետն նոցա, եւ խոստանայր եւս մինչեւ յաւարտ դատին՝ տալ նոցա զհասս բերդին Կասղիմայ, եւ ՚ի վերայ այնորիկ՝ ձեռն տալ նոցա առ ՚ի թափել զբերդն Դարպսակ ամենայն նահանգան. բայց միայն զի եկեացն յօգնութիւն ընդդէմ այլազգեաց: Իսկ նոքա ոչ առնուին յանձն, ապա ինդրեաց՝ զի եթէ ոչ կամին ՚ի մարտ մտանել, գոնեա զգուշացին պահպանութեան երկրի իւրում, մինչ ինքն միայնակ երթիցէ ՚ի վերայ այլազգեացն. եւ իբրեւ այսմ եւս անլսող լեալ յամառութեամբ՝ յետս եւս կոչեցին զգունդ իւրեանց, ՚ի բաց դարձոյց եւ Լեւոն զերեսս իւր ՚ի նոցանէ, եւ խաղաց ուր դէմ եղեալն էր. եւ դարձաւ յաղթական յաջողութեամբ, անվտանգ գտեալ եւ զերկիր իւր: Ապա վերստին պաշարեալ նստաւ առ Անտիոքաւ ամիսս երիս, եւ աղաչեալ ՚ի քաղաքացեացն, առ հաճոյս կամաց Քահանայապետին՝ ՚ի բաց եկաց. որպէս եւ ինքնին գրէ, վասն այսր՝ եւ ոչ առ ահի հրաժարեալ: Չայս ամենայն երկար թղթով ծանոյց Լեւոն առ Քահանայապետն՝ ՚ի ձեռն Կառների Տելտոնեան ասպետի՝ դեսպանի իւրում¹³⁹. ինդրելով եւս զի եթէ հնար է՝ ընդ նուիրակացն յիշեցելոց առաքեացէ քննիչ՝ զպսակիչ իւր ծերունի արքեպիսկոպոսն Սոգունտիոյ. (ոչ զհտելով զի վախճանեալ էր սա յամի 1200). եւ դարձեալ զի (թուի թէ պատրիարքն Անտիոքայ միաբանեալ ընդ կոմսին սպառնացեալ էր Լեւոնի կամ իւրոցն՝ նզովս), մի՛

¹³⁷ Mellifluis litteris vestris perspicue intelleximus.

¹³⁸ Վերոյիշեալ թուղթ Քահանայապետին, որ տուեալ է յամսեան հոկտեմբերի այնր (1203) տարւոյ:

¹³⁹ *Garnerium Teutonem ad pedes Sanctitatis Vestrae dirigimus.*– Թուղթ Լեւոնի ՚ի Ա հոկտեմբերի, 1201:– Հուրդէր: